

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԸ ՆԵՐԳԱՂԹԻ ԽՆԴՐԻ ԱՌՋԵԻ

ՍԱՐԳԻՍ ՓԱՆՈՍԵԱՆ

Ֆրանսահայ նշանավոր գրող Վազգէն Շուշանեանի (1903-1941) կարճատեւ, բայց հարուստ կենսագրութեան որոշ էջեր սքողուած են առեղծուածալին մշուշով, եւ դա է պատճառը, որ աւելի յաճախ իրականութեանն անյարիր, թիւր մեկնաբանութիւններ են ստացել նրա անձին ու գործին առընչուող հանգուցալին հարցեր: Գրողի անտիպ ժառանգութեան ուսումնասիրութիւնը լոյս է սփռում դրանց վրայ, բացայայտում սոսկ արտաքուստ առեղծուածակերպ ճշմարտութիւններ: Տուեալ պարագային՝ հարցը վերաբերում է Վազգէն Շուշանեանի ներգաղթի խնդրին:

Խորհրդային Հայաստանում նա առաջին ու վերջին անգամ եղաւ պատանեկութեան օրերին՝ իր համար ծանրածանր մի ժամանակ, երբ դեռ չէին հասցրել սպիանալ նրա հոգու վէրքերը, թարմ էին անհատուցելի կորուստների լիշատակները: Խառն ու անբարեւոյս ժամանակներ էին նաեւ դեռ նոր խորհրդայնացած Հայաստանում, ուր մի կարճ ժամանակահատուած բանտարկուեց Արմաշի երկրագործական վարժարանի սան Վազգէն Շուշանեանը: Ինքնին պարզ է, թէ ինչպիսի՞ն կարող էր լինել առաջին ու մնալուն տըպաւորութիւնը համայնավարներից: Յամենայն դէպս՝ գրողի Սիրոյ և Արկածի Տղաք ինքնակենսագրական ստեղծագործութեան մէջ թերահաւատութիւնից աւելի բացայայտ անհայտութիւն կայ աշխարհի ինքնակոչ «նոր տէրերի» եւ նրանց սահմանած կարգերի դէմ: Յետագայում, երբ արդէն համոզուած ընկերվարական էր եւ թրծուել էր քաղաքական պայքարի բովում՝ դադափարական լուրջ տարակարծութիւններ ունէր համայնավարութեան հետ, որոնք քանիցս բանաձեւել էր իր յօդուածներում: Այսպէս, 1927-ին Միջազգային Տնտեսական Խորհրդաժողովին Խորհրդային Միութեան մասնակցութեան առիթով գրում է. «Անտարակոյս, ուսերը, հա-

մաձայն իրենց սովորութեան, ոչ թէ եկած էին լրջօրէն աշխատելու, հապա քարոզելու իրենց վարդապետութիւնը եւ աղմուկ շարուցանելու: Մտածող ու ազատ մարդկութեան հետ ամէն շփում զանոնք կը դնէ նեղ ու ստորադաս դրութեան մը մէջ: Իրենք լաւ գիտեն ատիկա, ու ատոր համար է, որ կ'ապաստանին լեղափոխական գուր ու վտանգաւոր բառամոլութեան մը ու ամբոխավարական տխուր գործերու ետին»¹:

Այդ ամենով իսկ նա չհրաժարուեց հայրենիք վերադառնալու մտքից: Իր Օրագիրում թուագրուած՝ 24 Նոյեմբերի 1936, կարդում ենք. «Ինձ կը թուի, թէ ինչ ալ ըլլալ երկրի մը վարչաձեւը՝ իր քաղաքացիներուն պարտականութիւնն է մնալ մայրենի հողին վրայ, ի նկատի ունենալով բոլոր վտանգները: Ինձ կը թուի ցայժեւ, թէ մեր առաւելագոյն դերը կրնանք խաղալ մեր երկրին մէջ, նոյնիսկ տաժանելի պայմաններու մէջ: Անշուշտ յաճախ ժամանակաւոր աքսորը կ'արդարանայ,-- այլ ոչ երկու տասնամեակ տեւող բացակայութիւնը, որ ի վերջոյ կրնայ վերածուիլ դասալքութեան,-- երբեմն անպատիւ»²: Աւելի ուշ՝ 1940 թուականին, ինքն իր համար մի ուրոյն հանգանակ էր մշակել, որի կէտերից մէկը լուշում էր. «վերադառնալ հայ միջավայրին»³: Առանց այդ վերադարձին՝ ապրած ողջ կեանքը ցաւատանջ վրիպանք էր համարում, եւ բացի հայրենիքին օգտակար լինելու գիտակցուած մղումից՝ ալիւս ահագնացել էր բնական հողից կտրուած հայ մարդու, տարագիր որդու կարօտը: Իր վերջին օրագրերում, թէպէտ ակնյայտօրէն լուսալքուած՝ բայց յորդուն եւ անկեղծ կարօտով գրում էր. «Ի՛նչ, թէ անոնք կրնան մեզ լրվանթէն»⁴ կոչել՝ եթէ վերջապէս չաջողինք վերադառնալ: Մենք, որ վարժուած ենք տառապելու՝ կըրնանք գուցէ ընդունիլ այդ յաւելուածական տառապանքը եւս,-- մենք, որ ուրիշ փառասիրութիւն չենք ունեցած բացի առաւելագոյն հայեր ու լեղափոխականներ ըլլալէ: Ի՛նչ փոյթ մեր հաւանական օտարութիւնը՝ մեր երկրին մէջ իսկ: Միայն թէ այդ մանուկները կարենային շքեղօրէն մեծնալ ...»⁵:

Շուշանեանը պատահամբ կամ լաւուր պատշաճի չի վկայակոչում ներգաղթի դժուարութիւնները: Նա իսկապէս բախուել էր դրանց՝ դեռ 1934 թուականին:

Այդ տարի, ինչպէս լետագայ օրագրերն են վկայում, վազգէն Շուշանեանն իրօք լրջօրէն ու հետեւողականութեամբ զբաղուել է ներգաղթի խնդրով: Տուեալ շրջանում իրեն համակած տրամադրութիւնների սեփական հոգեվիճակի մասին 1936-ի Նոյեմբերին գրում էր. «Անկասկած, կեանքս քանի մը տարիներէ ի վեր այնպի-

սի անելի մը առջեւ կը գտնուի, որ Հայաստան վերադարձս պիտի կրնար զիս ազատ ափ հանել: Տարիներէ ի վեր դժուարին, երբեմն ողբերգական ճիգով մը կուտակած բոլոր ուժերս կրնային գէթ նուազագոյն կերպով օգտագործուիլ մեր ժողովուրդին վերելքի գործին մէջ»⁶: Առանձնացուող «քանի մը տարիները» ընդգրկում էին 1932-1933 տարիներին լաջորդած շրջանը՝ որը մեծ ու ցաւալի բեկում էր մտցնում Շուշանեանի կեանքում: 1932-ին հեռացում է Հ. Թ. Դաշնակցութեան շարքերից, ինչպէս ինքն է խոստովանում՝ «ընդվզած ըլլալով ղեկավարութեան դէմ»⁷: Այստեղ չձանրանալով բարդ ու բազմակնճիտ այդ հարցի վրայ, որ առանձին քննութիւն է պահանջում ասեմք միայն, որ փիւռքի քաղաքական կեանքում մեծ աղմուկ հանած իրադարձութիւնը խոր հետք է թողել Շուշանեանի ճակատագրում: Չմոռանանք, որ նա Հ. Թ. Գրանասալի կենտրոնական կոմիտէի անդամ էր, կուսակցութեան պատուիրակութիւնների կազմում մասնակցել էր Սոցինտերնի⁸ երկու համագումարների եւ ընդհանրապէս քաղաքական բուռն գործունէութիւն էր ծաւալել: Այդ քանից յետոյ խորապէս ըմբռնելի է գրողի «հոգեկան վիճակը», որն անպայմանօրէն իր դերն է խաղացել ներգաղթի որոշում կայացնելիս:

Այնուամենայնիւ, ներքին հակասութիւններից անմասն չէր Շուշանեանը: Մի բան անհերքելի էր. Խորհրդային Հայաստանը որպէս եղեմական պարտէզ չէր պատկերացնում: Նոյն օրագրերում խոստովանում էր, որ երբեք մոլորութիւնը չի ունեցել տարուելու համայնավարական երկրի թուացեալ «խաղաղութեամբ», միշտ պատկերացրել է այնտեղի «մթնոլորտի անշնչելիութիւնը»⁹: Անշուշտ, վերջին իրողութեան նկատաւմամբ էր գրում. «Արդարեւ՝ միշտ տեսակ մը խղճի խալթ զգացած եմ գաղութներու մէջ յարաբերական հանդարտութեամբ մը ապրելու համար»¹⁰: Հետեւաբար, բուն իմաստով «ազատ ափ» գտնելու հեռանկարն ինքնին պատրանք էր, եւ բացալայտ հակասութեան հիմքում պէտք է տեսնել վերը նշուած հանգամանքների բերումով ստեղծուած «անել» վիճակը:

Շուշանեանն ինքը, առանց յետին մտքերի ու անորոշութեան, արձանագրում էր ստոյգ երկընտրանքի գոյութիւնը գաղութում գործել կամ «Խորհրդային Հայաստանի ազդեցութեան գօտիին մէջ ...», կամ էլ՝ Հ. Թ. Դաշնակցութեան «կուսակցութենէն ընդմիշտ հեռանալու կանխորոշուած մտադրութիւն» չունէր¹¹, բայց արտաքսումն ալլընտրանք չէր թողնում: Հետեւաբար, «ազդեցութեան գօտի»ի փոխարէն աւելի նպատակայարմար չէ՞ր արդեօք

բուն երկիրը: Հարցի կապակցութեամբ գրողն ուրիշ խոստովա-
նութիւններ էլ է անում. «Բացի հայրենի երկրի կարօտէն, աշխա-
տելու ու արդիւնաւոր կերպով ծառայելու անընկճելի փափաքէս
եւ այլն՝ կար նաեւ այլ զօրաւոր պատճառ մը, որ զիս մղած էր
վերադարձի այդ դիմումը ընելու,-- առողջութեանս աստիճանա-
կան տկարացումն ու օտար հողի վրայ մեռնելու երկիւղը»¹²: Ժա-
մանակը ցոյց տուեց, որ իսկապէս իրաւունք ունէր երկիւղելու:
Վկայ է նրա մտաացուած, կորուսեալ շիրիմը Փարիզի Պաննէօ գե-
րեզմանատանը:

1934-ի Նոյեմբերի 5-ին Վազգէն Շուշանեանը Սահակ Տէր
Գարբիէլեանի անունով դիմում է լղում Հայաստանի կառավարու-
թեանը՝ ներգաղթի թողլտուութիւն ստանալու համար¹³: Միաժա-
մանակ նամակներով դիմում է Փարիզ գտնուող Աւետիք Իսահակ-
եանին եւ երեւանաբնակ Զապէլ Եսայեանին՝ խնդրելով միջնորդել:
Շուշանեանը լիչատակում է Իսահակեանից ստացուած նամակի
մասին: Վարպետն ակնարկում էր դիմումի չոր ոճը՝ միաժամանակ
վկայելով, թէ Վահրամ Ալազանը հարցի առընչութեամբ իօսել էր
Սահակ Տէր Գարբիէլեանի հետ: Վերջինս խոստացել էր գործին
ընթացք տալ այն պահից՝ երբ ստացուէր Շուշանեանի պաշտօնա-
կան դիմումը Հայաստանի կառավարութեանը: Մտածելով թէ դի-
մումը տեղ չի հասել՝ Շուշանեանը երկրորդն է լղում՝ նկատի ու-
նենալով Իսահակեանի ակնարկը: Պարզ բաղդատումից անգամ ե-
րեւում է որ հեղինակն ընդարձակել է երկրորդ դիմումը՝ յատկա-
պէս ներկայացնելով իր քաղաքական համոզումներն ու կուսակցա-
կան գործունէութիւնը:

Գործի ընթացքը բաւականին ձգձգուել է. հաւանաբար լուրջ
տարաձայնութիւններ են եղել: Միւս կողմից՝ Շուշանեանը նպա-
տակայարմար չէր գտնում ներգաղթողների ընդհանուր կարաւա-
նին միանալ: Իր խնդրով գրողը հանդիպել է «ներգաղթի պատ-
ուիրակ» Դ. Շահվերտեանին եւ համայնալար ուրիշ ներկայացու-
ցիչներին: Բոլոր դէպքերում տպաւորութիւնը նոյնն է եղել՝ «ան-
կեղծութեան պակաս, լեղափոխական ոգիի բացակայութիւն»¹⁴:

Հակառակ այդ ամենին՝ Շուշանեանին դեռեւս չի լքել ներգաղ-
թի վճռականութիւնը, այնպէս որ Միրան Սեզալին հասցէագրած
իր մի նամակում նոյնիսկ մեկնումի մօտաւոր ամսաթիւ է նշում.
«Շատ հաւանաբար Մայիսի 9-ի կարաւանին հետ մեկնիմ Հայաս-
տան: Կ'ըսեմ շատ հաւանաբար, քանի որ չեմ գիտեր թէ պիտի յա-
ջողի՞մ 15 օրուայ մէջ հարկ եղած պատրաստութիւնները տեսնել,
մեկնման անհրաժեշտ եղող փոքրիկ գումարը ճարել, ձեռագիրնե-

րուս մասին կարգադրութիւն մը ընել, եւ այլն»¹⁵,

Նամակը թուագրուած չէ, բայց որոշ իրողութիւնների համադրումը վաւերական այլ փաստերի հետ հնարաւորութիւն է տալիս ընդհուպ մերձենալ ճշմարտութեանը: Այսպէս՝ արդէն 1935-ի Դեկտեմբերին իր ձեռագրերը պահ տալու խնդրով Շուշանեանը պիտի դիմէր Վիեննայի Միխիթարեաններին եւ ստանար Արքահայր Հապոգեանի դրական պատասխանը: Միւս կողմից՝ Սեգային ուղղուած նոյն նամակում եւս նախընտրելի է համարում «առանձին մեկնել»ը՝ նկատելով սակայն, թէ «տրամադիր չեն երեւիր»: Այս ամէնը հաւաստում են, որ նամակը գրուել է ճիշդ նոյն շրջանում՝ 1935-ի սկիզբներին, այսինքն՝ ներգաղթի համար երկրորդ դիմումը լղելուց յետոյ: Այնուամենայնիւ, երբ Մոսկուան վերջապէս տրուել է իր համաձայնութիւնը, Շուշանեանն արդէն Փարիզում չէր: Յետոյ պիտի խոստովանէր, որ Փարիզից հեռու՝ Ռուանում ապրելով, հնարաւորութիւն չի ունեցել պատրաստուելու: Բայց վարանումի երկու աւելի զօրեղ պատճառներ կային: Նախ՝ «դիւրին չէր մէկ քանի սիրելի էակներէ այդ լեղակարծ բաժանումը»: Իսկ կաշկանդող «ամենագորաւոր» պատճառն, անշուշտ, մշակութային անտանելի «կլիմայի» հեռանկարն էր՝ «քար լուծիւն մը, խուլ վերապահութիւն մը»¹⁶,

Մնում է լետին թուով բարի նախախնամութիւն տեսնել այդ ներգաղթի, Շուշանեանի բառերով ասած՝ «արկածի» ձախողման մէջ: Դժուար չէ կռահել, թէ հակառակ դէպքում ի՞նչ էր սպասում «ազատ ափին»: Վկայ են վահան թոթովենցի, Ջապէլ Եսայեանի, եւ այլոց ճակատագրերը:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա.

ՎԱԶԳԷՆ ԾՈՒԾԱՆԵԱՆԻ ԳԻՄՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՆԵՐԳԱՂԹԻ ՆՊԱՏԱԿՈՎ

Քաղաքացի Սահակ ՏԷՐ Գաբրիելեանին,
Նախագահ Հայաստանի Ժող. Գործավարներու Խորհուրդին
Երևան

Քաղաքացի Նախագահ,

Ստորագրեալս՝ Վազգէն Ծուշանեան, ծննալ 1903-ին, Ռոտտսօ (Եւրոպական Թորքիա), աքսորուած 1915-ին դէպի Միջագետք, ուր կորսնցուցած էմ ծնողքս, հաստատուած՝ 1923-էն ի վեր ֆրանսայի մէջ, կը խնդրեմ Հայաստանի Ժող. Գործավարներու Խորհուրդէն արտօնել Խորհրդային Հայաստան բնակութիւնս ու հարկ եղած կարգադրութիւնները ընել դիւրացնելու համար անցագրային գործողութիւնները:

Վկայուած էմ Վալապրի (Հարաւային ֆրանսա) Երկրագործական ու Այգեգործական Երեքամեայ Վարժարանէն, արժանանալով շքանշանի (1927), նաեւ՝ Մամիրոյի կաթնային ճարտարարուեստի դասընթացքէն (1928): Յաճախած էմ Փարիզի Համալսարանին կից՝ Ընկերային Ռսմանց Ծեմարանը (1931) ու Սորպոնի գրական բաժինը: Կը նախընտրեմ ծառայել գրական, լրագրական, կամ հրատարակչական որեւէ ճիւղի մէջ:

Այժմ կը պաշտօնավարեմ, իբր ընդհ[անուր] հսկիչ՝ ֆրանսական պետական գիշերօթիկի մը մէջ¹⁷, բայց իմ փափաքս է հաստատուիլ Խորհրդային Հայաստան, ուր կը յուսամ, ուժերուս ներածին չափով, մասնակցիլ վերաշինութեան ընդհանուր գործին:

Ընդունեցէք, Քաղաքացի Նախագահ, ընկերվարական բարեւոնքս:

[Նոյեմբեր 5, 1934]

[Վազգէն Ծուշանեան]

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՄՈՒՄԸ

Քաղաքացի Սահակ Տէր Գարրիլեանին,
Նախագահ Հայաստանի Ժող. Գործավարներու Խորհուրդին
[Սրբուան]

Քաղաքացի Նախագահ,

Անցեալ տարուայ Նոյեմբեր հինգին՝ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի միջոցով, որ բարի եղած էր միջնորդել ձեր նախագահած կառավարութեան մօտ, հետեւեալ դիմումը ըրած էի:

(Հոս ամբողջութեամբ Նոյեմբեր հինգի դիմումս)

Ընկեր Աւետիք Իսահակեանի յանձնարարութեան վրայ կը նորոգեմ սոյն դիմումը, կցելով կարգ մը տեղեկութիւններ, որ գուցէ կարենան հիմ ծառայել ձեր տալիք որոշման:

Նիւթական շարժառիթով չէ միայն, որ կ'ուզեմ հեռանալ ֆրանսայէն, քանի որ հակառակ տիրող տնտեսական ծանր տագնապին՝ յաջողած եմ քիչ շատ ապահով գործ մը ճարել: Ինչ որ զիս կը մղէ սոյն դիմումը ընել՝ գաղթային ծանր ու հեղձուցիչ մթնոլորտն է ու գլխաւորաբար պժգանքը դրամատիրական կարգերէն, որոնց լուծը կանուխէն զգացած եմ:

Յարած ըլլալով, 1923-ին, Հ. Յ. Դաշնակցութեան, յաջորդաբար եղած եմ շրջանային կոմիտէներու եւ Կեդր[ոնական] կոմիտէի անդամ, աշխատակցած եմ բազմաթիւ թերթերու եւ գրական պարբերականներու, մաս կազմած նոյն կուսակցութեան պատուիրակութեանց՝ Մարտիլ ու Պրիսէլ գումարուած Ընկերվարական Միջազգայինի Համագումարներուն մօտ: Հեռացած եմ այդ կազմակերպութենէն 1932-ին (ընդվզած ըլլալով դեկավարութեան դէմ): Այժմ կը պատկանիմ ոչ մէկ կուսակցութեան ու հոսանքի:

Համոզումներով ընկերվարական՝ միշտ դէմ եղած եմ ամէն կարգի միջամտութեան (արտաքին ու զինեալ) ընդդէմ Խորհրդային Միութեան ու ջանացած եմ ծառայել հայ աշխատաւոր ժողովրդին: Հարատուցած եմ, որ ձեր նախագահած կառավարութիւնը հանութեամբ պիտի քննէ դիմումս՝ զայն համարելով յեղափոխական օրինապահութիւնը կանխաւ ընդունող բացայայտ արարք մը: Ձեր պատասխանը դրական եղած պարագային՝ մտա-

դիր եմ մեկնիլ անմիջապես որ միջոցներս ներեն:

Ընդունեցէք, Քաղաքացի Նախագահ, ընկերվարական բարեկեցիկներս:

Փետրուար տասներկու, 1935

[Վազգէն Օռշանեան]

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տես՝ Վազգէն Օռշանեան, «Ընկերվարական հրահրան», Գրոշակ, թիւ 7, Յուլիս, 1927, էջ 204:
2. Վազգէն Օռշանեան, «Օրագիր, 1936-1937-1938», Եղիշէ Զարեհի անուան Գրականութեան եւ Արտեստի Քանգարան [ԳԱԹ], Օռշանեանի Ֆոնտ, թիւ 10, էջ 8 (անտիպ):
3. Տես՝ Վազգէն Օռշանեան, Զօն տարաբախտ Վազգէնի յիշատակին, յանուան Ա. տարեկիցիցն առթիւ, իր բարեկամներուն կողմէ, Փարիզ, 1942, էջ 18:
4. Լըվանթէն - ֆրանսերէն՝ արեւելքի:
5. Վազգէն Օռշանեան, «Մեր երկիրը», Բագին, ԻՐ. տարի, թիւ 2, Փետրուար, 1983, Պէյրութ, էջ 36:
6. ԳԱԹ, Օռշանեանի Ֆոնտ, թիւ 10, էջ 3:
7. Խօսքը վերաբերում է՝ այսպէս կոչուած "Մարտկոցական" Օարժմանը, որի մասին անկի ոչ՝ 1940-ին Օռշանեանը գրելու էր. "Այ յիշեմ Մարտկոցի գէշ օրերը: Մեզմէ ոչ ոք անկի վիրաւոր զօրս եկաւ այդ պայքարին: Ու վճռական ժամուն, երբ անհրաժեշտ էր ամէն ինչէ հրաժարիլ պարկեշտ մնալու համար,-- ապահովութենէ, ապրուստէ, բոլոր բարեկամութիւններէն, հրաժարիլ նոյնիսկ գրականութենէ՝ որ կեանքի էութիւնն իսկ էր, վայրկեան մը վարանեցա՞յ միտ": Տես՝ Վազգէն Օռշանեան, «Օրագիր, Տետրակ Ե., Գերմանական արշաւանքի շրջանին, 1940», Լալիթի, Ե. տարի, թիւ 18, 13 Յունուար 1957, էջ 6:
8. Սոցիալիստերն -- Սոցիալ Ինտերնացիոնալ. Միջազգային Ընկերվարութեան Համագումար:
9. ԳԱԹ, Օռշանեանի Ֆոնտ, թիւ 10, էջ 7:
10. Նոյն, էջ 8:
11. Նոյն, էջ 4-5:
12. Նոյն, էջ 8:
13. Դիմումագիրը տես ՅԱԻԸԸՆԻԱԸԻ բաժնում:
14. ԳԱԹ, Օռշանեանի Ֆոնտ, թիւ 10, էջ 15:
15. Վազգէն Օռշանեան, «Աղէկ աղջիկը», թիւ 85, Երիտասարդ Հայ, 20 Հոկտեմբեր 1973, էջ 5-6:
16. ԳԱԹ, Օռշանեանի Ֆոնտ, թիւ 10, էջ 9-10:
17. Այսինքն՝ գիշերօթիկ վարժարանի մը մէջ:

Ա. Փ.

VAZGEN SHOUSHANIAN VIS-À-VIS
THE QUESTION OF IMMIGRATION
TO SOVIET ARMENIA

(SUMMARY)

SARGIS PANOSSIAN

It was in 1934-1935, after severing his connections with the Armenian Revolutionary Federation which he had served in the capacity of a member of its Central Committee, that the renowned Armenian prose-writer and novelist Vazgen Shoushanian did finally decide to leave Paris and settle permanently in Soviet Armenia which he had left on its early days of sovietization. To this effect, he sent two consecutive applications to Sahak Ter-Gabrielian, the Prime Minister of the time, to get permission to return home.

The author of the article deals with the problem of applications, founding his work on some hitherto unpublished material from Shoushanian's papers kept in the archives of the Museum of Literature and Arts of Yerevan, Republic of Armenia. He also makes some use of the posthumously published diaries of the late great Armenian writer and intellectual. Thus constituting the circumstances, which led Shoushanian to the conclusion to immigrate to Soviet Armenia, where, he knew well, he would not find "the gardens of paradise", write his applications and forward them to their destination, though now it is almost impossible to know whether he received any answer, positive or negative.